ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԳԻՆԸ

ՄԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Մեծ և փոքր շրջափակումների պատճառով «Պլաստիկ» արտադրական միավորման կոլեկտիվը պակաս է բողարկել շուրջ մեկ միլիոն 200 հազար ռուբլու արտադրանք, այն դեպքում, երբ միութենական պատվիրատուների թիվն ու պատվերների ծավալները մեծանում էին: Ու հիմա տենդային ջնջակ է միավորման բոլոր օղակներում: Երևանի մասնաճյուղի գլխավոր ինժեներ Մարատ Գրիգորյանը իրեն պատեպատ է խփում, նամքի ամեն մի կիլոգրամը խիստ հաշվառման մեջ է, իսկ երկու շրջափակումների միջև ընկած՝ «ճարևանների» մի քանի օրվա ուշացրած «շնորհի» պատճառով պահեստավորել էին մի քիչ նյութեր, որոնք հիմա վերջանալու վրա են, և մարդիկ պիտի դադարեցնեն աշխատանքը, ինչպես կանգնել է գլխամասային ձեռնարկության բաղանքի արտադրամասը: Իսկ երբ հայերը խոսում են ճարևանների մարդկային փոխհարաբերությունների ոչ մի պարագայում չտեղավորվող վարքագծի մասին, «ժողովրդական» դեմքատաը ավերիչ երկրաշարժի պիրակների միջից լսվող բողոքի պիտակում է իբրև իր ազգին հասցված վիրավորանք և հատուցում պահանջում: Այսպես են հիմա ժամանակները, այսպես են բարքերը: Իսկ հանրապետության էկոնոմիկան, անասելի վնասներ է կրում, ակամա պատճառ դառնալով նաև միութենական շատ ձեռնարկությունների առաջադրանքների բերակատարմանը:

— Այո, մենք հիմա պարտք ենք մնացել Միության տասնյակ ձեռնարկություններին,— ասում է միավորման գլխավոր դիրեկտորի տեղակալ Մարատ Մալաքյանը:— Խոսենք թվերի լեզվով. մեր պայմանագրային պարտավորությունները արդեն բերակատարել ենք մոտ երկու միլիոնով: Ուզբեկստանի, Կենտրոնական Ռուսաստանի, Ղազախստանի, Ուկրաինայի և Միության այլ հանրապետությունների պատվիրատուներին չենք կարողացել ուղարկել ժողովրդական սպառման, ագրոարդյունաբերական համալիրի առաջին անհրաժեշտության ամենատարբեր ապրանքներ: Արդեն տասն օր կանգնած է բաղանքի արտադրամասը, իսկ գյուղի աշխատողները, կապալային և կոոպերատիվ բրիգադներն ու ֆերմաները սպասում են պոլիէթիլենե ծածկոցների:

Կես կարողությամբ են աշխատում կամ լրիվ կանգնած են էջմիածնի, Ազիզբեկովի, Հրազդանի մասնաճյուղերը, իսկ վայ-հարևանները երկարուղու անխափան աշխատանքի ապահովման երաշխիք են տալիս Մոսկվային:

Տուժում են բոլորը՝ թե մենք, թե պատվիրատուները, թե հենց բանվորները: Պատկերացրեք, 12 հազար ռուբլի աշխատավարձ չենք վճարել. մարդիկ օրերով գալիս են իրենց աշխատատեղերը, բայց հումք չկա, արտադրանք չեն տալիս և աշխատավարձ չեն ստանում: Կարծում եմ, նյութական խրախուսման, սոցիալական հարցերի պատշաճ լուծման մասին խոսելն ավելորդ է, որովհետև շաբաթի առաջադրանքը բերակատարել ենք մոտ քառորդ միլիոնով:

Դիրեկտորի տեղակալի փաստարկներին ավելացնենք ևս երկուսը. միավորումը կրել է 590 հազար ռուբլու տնտեսական վնաս, իսկ որ առավել զարմանալի ու անընկալելի է, պայմանագրային պարտավորությունները չբերակատարելու համար ենթարկվել է 350 հազար ռուբլի տուգանքների ու տույժերի: Դարձյալ տարակուսենք՝ օ՞, ժամանակներ, օ՞, բարքեր, ո՞ւմ ոճիրը, ո՞ւմ պատիժը...

ՄԱՆՎԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ